ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 7

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

13.03.2020 *Ք. Իջևան*

Մասնակցում էին գիտխորհրդի բոլոր անդամները.

ՕՐԱԿԱՐԳ

1. 2019-2020 ուսումնական տարվա առաջին կիսամյակի լուծարքային շրջանի ամփոփում (զեկ.՝ Վ. Աղաբաբյան):
2. Ավարտական և կուրսային աշխատանքների կատարման ընթացքի վերաբերյալ հաշվետվությունների քննարկում (զեկ.՝ Կ. Պողոսյան):
3. Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 1-ին հարցի վերաբերյալ զեկուցող Վ. Աղաբաբյանը ներկայացրեց 2019-2020 ուստարվա առաջին կիսամյակի լուծարքային շրջանի ամփոփումը: Նա նշեց, որ լուծարքային շրջանը կազմակերպվել է ժամանակացույցին համապատասխան, խախտումներ և բացթողումներ չեն արձանագրվել: Լուծարքային շրջանին մասնակցած ուսանողները դրական գնահատական են ապահովել 1-ին լուծարքային շրջանի ժամանակ: Զեկուցողը ըստ կուրսերի ներկայացրեց 1-ին լուծարքային շրջանի ընդհանուր պատկերը.

«Պատմություն» կրթական ծրագրով լուծարքային շրջանին մասնակցել է 7 ուսանող, որոնցից 4-ը ունեցել է պարտք մեկ առարկայից, իսկ 3-ը՝ երեք և ավել առարկաներից:

«Հայոց լեզու և գրականություն» կրթական ծրագրով լուծարքային շրջանին մասնակցել է 4 ուսանող, որոնք անբավարար գնահատական են ունեցել մեկ առարկայից:

«Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» կրթական ծրագրով լուծարքային շրջանին մասնակցել է 32 ուսանող, որոնցից 19 անբավարար գնահատական է ունեցել մեկ առարկայից, 6-ը՝ երկու և 8-ը երեք և ավելի առարկաներից:

«Անգլերեն լեզու և գրականություն» կրթական ծրագրով լուծարքային շրջանին մասնակցել է 4 ուսանող, որոնցից 2-ը ունեցել է պարտք մեկ առարկայից, իսկ 2-ը՝ երեք և ավելի առարկաներից:

«Ֆրանսերեն լեզու և գրականություն» կրթական ծրագրով լուծարքային շրջանին մասնակցել է 2 ուսանող, որոնք ունեցել են պարտք մեկ առարկայից:

«Օտար լեզու և գրականություն» կրթական ծրագրով լուծարքային շրջանին մասնակցել է 12 ուսանող, որոնցից 9-ը ունեցել է պարտք մեկ առարկայից, իսկ 3-ը՝ երկու առարկայից:

«Ռուսաց լեզու և գրականություն» կրթական ծրագրով լուծարքային շրջանին մասնակցել է 1 ուսանող, որը երեք և ավել առարկայից ունեցել է պարտք:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ., դոցենտ Կ. Պողոսյանը, բ.գ.թ., դոցենտ Ք. Հարությունյանը, բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, պ.գ.թ., դոցենտ Դ. Թինոյանը, մ.գ.թ., ասիստենտ Լ. Հարությունյանը, ասիստենտ Ա. Մարդանյանը, Շ. Գասպարյանը, Վ. Հարությունյանը, Ա. Ղազարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

2019-2020 ուստարվա առաջին կիսամյակի լուծարքային շրջանի ընթացքը համարել բավարար:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 2-րդ հարցի վերաբերյալ զեկուցեց ֆակուլտետի դեկան Կ. Պողոսյան: Զեկուցողը ներկայացրեց ամբիոններում կատարված քննարկումների արդյունքները: Կուրսային և ավարտական աշխատանքների կատարման գործընթացը սկսվել է 2019-2020 ուստարվա սեպտեմբերից: Անհատական բեռնվածությամբ նախատեսված կուրսային և ավարտական աշխատանք ղեկավարող դասախոսները ժամանակին ամբիոն են ներկայացրել թեմաները, որոնք քննարկվել են ամբիոնային նիստերում, կատարվել են ուղղումներ: Ուսանողները ժամանակին տեղեկացվել են և իրենց նախաձեռնությամբ ընտրել են կոնկրետ թեմաներ: Նշվեց, որ կուրսային և ավարտական աշխատանքների թեմաները համապատասխանում են պահանջվող չափանիշներին, ընտրված են այնպիսի թեմաներ, որոնք արդիական են, ուսանողի համար ներկայացնում են գիտական հետաքրքրություն:

Յուրաքանչյուր ղեկավար ամսվա մեջ որոշակի գրաֆիկով կոնսուլտացիոն հանդիպումներ է ունենում ուսանողների հետ: Զեկուցողը նշեց, որ յուրաքանչյուր դասախոսի հանդիպման ժամանակացույցը հաստատված է ամբիոնի կողմից և փակցված է հայտարարությունների տախտակին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, բ.գ.թ., դոցենտ Ք. Հարությունյանը, բ.գ.թ., դոցենտ Վ. Աղաբաբյանը, պ.գ.թ., դոցենտ Դ. Թինոյանը, մ.գ.թ., ասիստենտ Լ. Հարությունյանը, ասիստենտ Ա. Մարդանյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

– Ամբիոնային հաշվետվությունները կուրսային և ավարտական աշխատանքների ընթացքի վերաբերյալ համարել բավարար: